

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

51^{րդ} ՏԱՐԻ, ԹԻԻ 6

(ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ)

9 ՓԵՏՐՎԱՐ 1902

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՅԻՍՈՒՆ ՏՆՐԻ ԵՏՔԸ (Անգլաձ յուշեր)	S. Ա.
ՀԱՄԱՐՈՐԴԻ ՄԸ ՆՕԹԱՏԵՏՐԷՆ	Դ. ՊՈՒՊԼԻ
ԵՐԿՈՒՔԻ ԲԱԺՆՈՒԱԾ. — Եղիա Տեմիրճիպաշեան	Ռ. ՈՐԲԵՐԵԱՆ
ՎԻՔԹՕՐ ՀԻԿՈՅԻ ԾՆՆԴԵԱՆ ՀԱՐԻՐԱՄԵԱԿԸ	Օ. Զ. Ս.
ՀՐԱԺԵՇՏ (Սիբերգ)	Մ. ՈՒՂՈՒՐԼԵԱՆ
ՎԱՌԱՐԱՆԻՍ ԱՆԿԻՒՆԷՆ	ՄԵՆԱՍԷՐ
ՀԱՆՃԱՐ ԵՒ ՏԱՂԱՆԴ (Թարգմ. Ե. Գ.)	ՄԱՔՍ ՆՕՐՏԱՈՒ
ՅՈՒՇԱՏԵՏՐ	

Մասիս շաբաթաբերքի տարեկան բաժանորդագրինն է Կ. Պոլսոյ համար ՔԱՌՍՈՒՆ ղրօ. եւ գաւառներուն համար ՅԻՍՈՒՆ ղրօ., կանխիկ վճարելի : Արտասահման՝ 12 Ֆրանկ կամ 5 ռուպլի : Թղթատարական ծախսը խմբագրութեան վրայ է : Վեցամսեայ կամ եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկէն : Մասիս հրապարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտու, եւ կը գտնուի Բերայի բոլոր ծխավաճառներուն ու Պահէ-Գաբուի ջրավաճառներուն խանութները, ինչպէս նաեւ Ղալաթիոյ, Պոլսոյ եւ բոլոր արուարձաններու լրագրավաճառներուն մոլէ :

Չեղէ կըլծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐԱՅԻ

ՀԱՍՏԷ

در علیّه غلصه «مسیس» غزتهی اداره سی

ԵՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ»

Կ. Պոլիս, Ղալաթիս, Նորասուրենկեան խան

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ՏՈՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ. ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 15

Բացի սովորական չերքին հիւանդութիւններէ՝ կը դարձանէ մասնաւորապէս, նոր մեթոտներով եւ խնամով ստանոյնի, աղեսց, միգակսն ճարտաներու հիւանդութիւնները, ջղաշին տխրութիւնները, գաղիակսն ախտերը (սիֆիլիս եւ լն), եւ մտքի հիւանդութիւնները :

Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը :

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՏՈՔԹ. Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ. ՄԵՍ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 200

Կալարա-Սերայի Լիսէին դէմ

Ամէն օր ժամը 5—11 (Ը. Ե.)

Կիրակի օրերը ժամադրութեամբ

Ա Ր Ի Ս ԵՒ ԸՆԿ


ՇՈՒԿԵՇԱՐԺ ԿՈՐԾԱՏՈՒՆ

ՀՈՏԵՂԻՆԱՑ ԵՒ ՕՃԱՌԻ

Հիմնեալ 1889 ին

Կ. ՊՈԼԻՍ

ԹԱՀՏԱԳԱԼԷ



Վաճառք



Արուեստագիտական վերջին կատարելագործութեամբ եւ առաջնակարգ մեքենաներով օժտեալ եւ եւրոպացի վարպետի մը հսկողութեան ներքեւ կ'արտադրէ ամենանշանաւոր հոտեղէններ ինչպէս նաեւ թուալէթի հոտաւէտ եւ յուսկի պարզ օճառներ :

Տեսակի ազնուութեան մասին եւրոպական ամենամեծ գործարաններու տպարանացի դէմ մրցելու անաւելութեան կը միացնէ գիներու գերազանց աժանութիւնը փափաքողներուն՝ քախալովը ձրի կը ղրկուի :

Մեծաքանակ գնում ընել ուզողները կրնան դիմել Կ. Պոլսոյ մէջ ՕԴՕՍՏԻ ՊԱՔԵՒԻ Կ. ԻՆՃԻՃԻԵԱՆ ՈՐԻԻՐ վաճառատունները, իսկ գաւառներու եւ օտար երկիրներու մէջ դիմել գործակալութեանց որ խտորիւ, ուր պիտի գտնեն նմուշներու յուշագրութիւն մը՝ պէտք եղած բոլոր տեղեկութիւններով :

ԲԱՐԻՉ — Պ. Լաքառիեա Որդի եւ Ընկ. 28 Ռիւ

Շաքոտեօն

ՊՈՐՊԱՅ. — Պ. Ապքար եւ Ընկ.

ԱՂԻՔՈԱՆԻՐԻԱ. — Պ. Մ. Գալիսեան

ԳԱՀԻՐԷ. — Պ. Հ. Ռոզանբալ

ՌՈՒՍՃՈՒԿ. — Պ. Կ. Ինճիճեան Որդիք

ՎԱՌԵԱ. — Պ. Կեռոն Արտիքի

ԻՋՄԻՏ. — Պ. Յակոբ Մոմճեան

ՋՄԻՌՆԵԱ. — Պ. Հայրիսի Վառնիկ

ՍԵԼԱՆԻԿ. — Պ. Տիւֆէրեանտեգ

ԻՍՍԻԻԿ. — Պ. Մ. Քափուան

ՊԵՐՈՒԹ. — Պ. Ֆրանքի Շիֆիներ

ՍԱՄՍՈՆ. — Պ. Պ. Պետրոսեան Եղարք

ՆՐԱՊԻՋՈՆ. — Պ. Աբիս Կ. Ինճիճեան

ԵՐԱՍՏԻԱ. — Պ. Պ. Վ. Ս. Մեծատուրեան

ԻՏՈՒԹՈ. — Պ. Յակոբ Բոզլաուալ

ՄԱՍԻՆ

51^{րդ} ՏԱՐԻ

— 9 ՓԵՏՐՎԱՐ 1902 —

ՔԻՒ 6

ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԵՏՔԸ

ԱՆՋԱՏ ՅՈՒՇԵՐ

Ա.

Մեր սերունդը չի տեսաւ Մասիսի առաջին թիւին հրատարակութիւնը, բայց տեսաւ անոր հիմնադիրը՝ աշխատակիցներու մեծ մասին հետեւ եւ կ'ողջունէ այսօր յիսունամէկերորդ տարին այս թերթին որ գրական ամբողջ սերունդի մը մարգարանը եղած է։ Գրչի աշխատանքներու ամէն մէկը մեր սիրելի յիշատակները ունինք այս էջերուն մէջ, հանրային ու անհատական կեանքի յիշատակներ, սրտի ու մտքի յիշատակներ, որոնցմէ իրենները քրքրեց՝ նախորդ թիւով Գ. Զօհրապ, արժանաւոր ողջոյն մը ուղղելով այս կէս դարու լրագրական չրջանին բոլորմանը առթիւ։ Մասիսի 1892 - 1893ի խմբագրապետը, — որուն մտաւորական հազորակցութիւնը ու գրական բարեկամութիւնը այս թերթին հետ, իրաւունք կուտայ արդի խմբագրութեանը՝ զինքը ճանչնալ միշտ անոր պատուակալ խմբագրապետը, — հազիւ չորս էջի մէջ խտացուցած էր պատմութիւնը Մասիսին, առջի զոգոջ քայլերէն մինչեւ արուն հասակը, ընդհանուր գիծերը անոր հետեւած շաւիղին՝ հայ մամուլին մէջ, յաջորդաբար զայն վարողներուն ճաշակի ու լեզուի աւանդապահութիւնը, եւայլն։ Ի՞նչ կըրնամ աւելցնել այդ պերճախօս էջերուն վրայ, եթէ ոչ՝ քանի մը անջատ յուշեր ալ իմ կողմէս։

Ես ալ աւնիմ «մերժուած ոտանաւորիս» պատմութիւնը — նամակով Մասիսին զըրկուած ու լոյս չի տեսած ոտանաւոր մը — որուն հրատարակմանը չորս շաբաթ անձկագին սպասելէս հետքը, Պարոնեանին ներողամիտ նկատաւմանը ներկայացուցի ձեռագիրս որ լոյս տեսաւ Թասրունին մէջ։ Առաջին հըրատարակութենէս⁽¹⁾ ետքն էր ասիկայ, Մինաս Գաբամաճեանին Լոյսէն ձեռնթափ ըլլալէս բաւական ատեն հետքը, երբ օգտուել ուղեցի Զոյքու հեղինակին դրացնութենէն, Օրթագիւղի մէջ։ Զարմանքով մտածած եմ անկէ ի վեր որ, Պարոնեանը՝ հեղնող մը ու քննադատող մը չարունակ՝ տկարութեան վայրկեաններ կուենար սկսնակներուն նկատմամբ եւ մեծ հուշակուող բանաստեղծներուն կամ արձակագիրներուն գրուածքները ծաղրած ատենը, քաջալերական քանի մը տողով կը հրատարակէր յանկարծ պզտիկներուն զըրկուածքները։ Անո՞ր համար արդեօք, որ այն տոնի պզտիկները, դպրոցէ նոր ելած պատանիները, նուազ յաւակնոտ էին ու աւելի՛ համեստ քանի հիմակուանները, կամ թէ, անյաջող ոտանաւորներ գրելու եւ տպուած տեսնելու ախտը հիմակուան չափ բուռն կերպով ճարակուած չէ՞ր արդեօք։ Ճիշդ է թէ «ոչ ոք կը մեռնէր Պօլսոյ մէջ», առանց կանխապէս ապահովելու որ իր ետեւէն ոտանա-

(1) Պատուած՝ 1900ի Մասիսներուն մէջ։

ւոր մը հասցնեն» եւ իմ ստանաւորս ալ ,
պէտք է խոստովանիմ , ձօնուած էր վաղա-
մեռ բարեկամի մը շիրմին : Տարբերութիւնը
սա կը գտնեմ , այդ թուականի «ոտաֆաու-
րամորութեան» ու հիմակուանին միջեւ , որ
հիները մեռնողներուն վրայ միայն կը գրէին ,
մինչդեռ հիմայ . . . նորածիններուն իսկ
բանաստեղծութիւն ձօնող կայ : Անցեալները
Պոլսոյ մէկ արուարձանէն նամակ մը կը
հասնէր Մաւսիսի խմբագրութեան , գեռատի
օրիորդի մը ստորագրութեամբ , որ յայտնե-
լով թէ քոյրը զաւակ մը ունեցած է , իր
նորածին քննորդին ուղղուած ոտանաւոր մը
կը ներփակէր հրատարակելու խնդրանքով :
Ուրիշ մը , իր մայրիկին անուան տօնախմբ-
ութեանը առթիւ գրած ու ընտանեկան սե-
զանին վրայ կարդացած մէկ ձօնը հրատա-
րակուած տեսնելու բաղձանք կը յայտնէր :
Այս «մանկական»ներու դէզին քով՝ «մահա-
նուադ»ները նուազ գատապարտելի համար-
ուին գուցէ :

Իւթիւճեանին ինծի պատճառած յուսա-
վիրպումը Պարոնեանը դարմանեց , կ'ընէի ,
եւ ճիշդ ասոր համար , գառնութիւնով խառն
հետաքրքրութիւն մը ունէի Մաւսիսին «Տէր
եւ Տնօրէն»ը տեսնելու : Դիպուածը այնպէս
բերաւ որ , իրմէն առաջ Բիւզանդ Քէչեանը
ձանչնամ , իր հրապարակագրի էն թարմ
չրջանին մէջ : Թերթին մէջ Ազգ մը զրուած
էր օգնական-խմբագրութեան յարմար երիտա-
սարդ մը գտնելու համար . Կալաթա Սէրայի
Լիսէին իրաւաբանական դասախօսութեանց
հետեւելու սկզբնաւորութիւն մը ընելով հան-
դերձ , հրապարակեցայ խմբագրական ասպա-
րէզը մտնելու հեռանկարէն . եւ շունչս առի
Ճէլալ-Պէյ խանին վերնայարկը ուր կը գըտ-
նուէր այն ատեն Մաւսիսի խմբագրատունը ,
Գիրուկ երիտասարդ մը , — որ քառակուսի
լայն կիշէէ մը կը հազորդակցէր Տնօրէնին
գրասենեակին հետ , — ընդունեց զիս . բաղ-
ձանքս յայտնեցի եւ ինքն ալ պարզեց պա-
հանջները . բոսթայի վերաբերեալ աշխատու-
թիւններ , մանր մուշր թղթակցութիւններ
գործակալութեանց հետ , հաշիւ , գանձում ,
ու դեռ չեմ յիշեր ինչ . եւ եթէ ժամանակ
մնար , պզտիկ թարգմանութիւններու ալ
վարժութիւն :

— Կարելի չէ՞ արդեօք որ Իւթիւճեան է-
ֆէնտիին ներկայանամ , հարցուցի երկչոտ
ձայնով մը , յուսալով որ անիկայ նուազ
բաղմամբահանջ պիտի ըլլար :

— Զբաղեալ է այս վայրկեանիս , պա-
տասխանեց Բիւզանդ Քէչեան , աչք մը ա-
ռելով կիշէէն ներս որ խորհրդաւոր կերպով
կը ծածկէր ինձմէ Իւթիւճեանին ստուերն
անգամ :

Ճէլալ-Պէյ խանին սանդուխներէն գլխի-
կոր վար իջած պահուս , չէի երեւակայեր որ
ատեն անցնելէ ետքը , խմբագրական միւս-
նոյն գրասենեակին մէջ տասերկու տարի
(1884էն 1896) մէկտեղ աշխատակ-
ցէինք այն միւսնոյն երիտասարդին հետ որ
յուսախաբ կը թողուր զիս այն օրը : Ու ետ-
քէն ալ պիտի ստանձնէի խմբագրութիւնը
Մաւսիսին որուն արտօնատիրոջ երեսը ինծի
ցուցնելու շնորհը կը զանային այդ օրը :

1884էն մինչեւ 1900 , Մաւսիսին կրած
ձեւափոխումներուն պատմութիւնը հետաքր-
քաշարժ պիտի ըլլար , եթէ մէկը փորձէր
զայն գրի առնել : Շարաթաթերթ , օրաթերթ
ու կիսամսեայ հանդէս յաջորդաբար , ման-
կավարժականէն մինչեւ կրօնականի տարազը
հազնիլ փորձեց . բայց գրականին դերը գե-
րակշիռ մնաց միշտ , եւ այդ տասնըվեց տա-
րիներու միջոցին — կարճատեւ շեղումներէ
դուրս — Պոլսոյ Հայերուն միակ գրական
Հանդէսը մնաց , որուն շուրջը բոլորուեցան
օրուան բոլոր տաղանդաւոր գրողները , հի-
ները ու նորերը հաւասարապէս : Այդ չրջա-
ններուն մէջ , Մաւսիսին խմբագրապետութիւ-
նը վարողները , ընդհանրապէս amateur գրա-
գէտներ եղած են , սկսելով Զօհրապէն որուն
երկու տարի հրատարակած Մաւսիսները (ա-
ռաջին տարին ընկերովի) գրական նրբաճաշակ
ու խնամեալ հատորներ կը կազմեն ու շատ
մը գիրքերէ աւելի յարգ ունին մինչեւ այսօր
հայ մատենագրարաններու մէջ , 1893ին մա-
նաւանդ , Արեւելիի տպարանին մէջ — ուր
փոխադրուեցաւ Մաւսիսը Սէրփիլէն տպարա-
նէն — մօտէն ականատես եղայ իր խմբա-
րական գործունէութեանը զօր փաստաբանա-
կան աշխատութեանց յարաճուն բաղմամբով
ընդհատեց դժբաղդաբար . բայց մինչեւ այն

օրը , ուր իր անունը մնաց թերթին ճակատը իրրեւ «խմբագրապետ» , գրիչը զաղար առնել չգիտցաւ : 16 էջէ բաղկացող այս թերթը կարծուած էն աւելի յոգնութիւն եւ ուշադրութիւն կը պահանջէր , — ինչպէս մինչեւ այսօր : Յուրտ ձմեռ մը կար տն տարին , եւ գրագէտ-փաստաբանը , գատարանէ վերագարձին , կուգար կը փակուէր Նորատուենկեան Խանի տանիքին տակ , ուր հաճոյք կը զգայի իրեն ընկերանալէ . երկու գրաչար ունէինք մեր արամադրութեանը տակ , եւ իրիկուններ եղան , ուր մինչեւ կէս գիշեր , գործաւորի պէս կ'աշխատէինք տպարանին քարէ սեղանին վրայ , մէկ կողմէ ձեռագիր ու միւս կողմէ փորձ հասցնելով գրաչարներուն : Երկուքս ալ դեռ երիտասարդ էինք . զուտ մտաւորական հաճոյք մը կար մեզի համար՝ այս հեւ ի հեւ խոնջէնքին , այս անքուն անցում գիշերներուն մէջ , որոնց վաղայնաջորդ օրը , չարաթ առաւու , Մանիւին հրապարակ ելլելը ու գտած ընդունելութիւնը կը կազդուէին զմեզ մեր յոգնութիւններէն :

Գրաչարական կեանքի վրայ գրած եմ ատեն ատեն , իմ համակրանքս՝ մտքի աշխատաւորներու այդ գործակիցներուն նկատմամբ՝ ծագում առած է մանաւանդ գիշերային բացառիկ աշխատութիւններու շրջաններէն , ուր լարեկամական խօսք մը , թերթին յառաջդիմութեանը նախանձախնդիր ըլլալու կոչում մը աւելի կը քաջալերէ զիրենք քան . . . ամէնէն լեցուն չարաթականը , հաւատացէք : Եւ 1893ի ձմեռը , ամենէն աւելի յատկանշականը եղաւ այդ տեսակէտով : Վայրկեան մը կուգար ուր գործաւորները կանգ կ'առնէին , ճրագին ալօտ լոյսին առջեւ , աչքերնին մթաղնած ու ձեռքերնին յոգնած զգալով : Կրակարանը մարեւու մօտ կըլլար ու ածուին ալ սպառած : Հարկ էր կազդուել , տաքցնել զանոնք : Զօհրապին ողբերիչ մէկ խօսքը , սիրուն մէկ կատակարանութիւնը կը լրացնէր այդ պէսքը : Ու գրաչարները կը վերսկսէին եռանդով :

Կէս գիշերը անցած՝ Եիւքսէք-Գալաթըրըմի գառիվը կը չափէինք , ձիւնին տակ , պարապ ստամոքսով ու ծանրաբեռնուած գլխով ,

բայց թեթեւոտն միշտ , չունչերնիս Սանդրալ առնելու համար . — Սըլանտիկը գոյութիւն չունէր տակաւին : Յերեկոան աշխատութիւններն ալ ոչ նուազ տաժանելի կը դառնային շատ անգամ . սպասուած յօգուածի մը չհասնիլը՝ վայրկենապէս բան մը գրելու հարկին տակ կը դնէր խմբագրապետը , թէեւ անիկայ արդէն գրած լմնցուցած ըլլար իր բաժինը : Այս «վայրկենական»ներուն , — որոնք այդ հանգամանքը չունէին բնաւ ընթերցողներու աչքին որոնք գրուածքը կը դատէին եւ ո՛չ թէ գրուելու եղանակը , — էն եղական մէկ օրինակը այսօրուան պէս թարմ է յիշողութեանս մէջ : Գիշեր մը հրդեհ ծագեցաւ Գաաթգիւղ , եւ յաջորդ առաւուն իմացանք որ Զօհրապին բնակած տունն ալ այրեր է ամբողջ կարասիներով : Քիչ ետքը ինքն ալ եկաւ , յուզուած բնականաբար , եւ ինչ ընկիւնքին վրայ միայն մտածելով . գացի գտայ զինքը դրասնեկէին մէջ , բարեկամներէ շրջապատուած : Այս նիւթական աղէտին վերաբերող հարցումներուն մէջտեղ , զորս կուզէին իրեն , տպահովապէս դժգոհ տպաւորութիւն մը առաջ բերաւ ու ներդաշնակութիւնը խանդարեց իմ ձայնս , երբ ըսի . — Դժբաղդութիւնը կրկին է , վասն զի այսօր հինգշաբթի է , եւ Մանիւի խմբագրական չունինք :

Կը սպասէի որ զարմանք կամ զայրոյթ յայտնէր այս պահանջկոտութեանս :

Ընդհակառակը՝ ուրախանին պէս , անցաւ դրասեղանին առջեւ օրուան նիւթի մը վրայ «առաջնորդող յօգուած» մը գրելու համար : Զեռագիրը տպարան զրկելէն ետքը միայն շարունակեց զբաղիլ բնակարանի ու կարասիներու խնդրով :

Ինչո՞ւ կը քրքրեմ այս յիշատակները : Հանրութեան համար շահեկանութիւն մը կրնա՞ն ունենալ անոնք : Թերեւս , գրասէրներուն , Պոլսոյ լրագրական կեանքով հետաքրքրուող հետաքնակ ընթերցողներուն համար : Կամ զէթ , բան մը կ'ապացուցանեն . թէ հայ խմբագրին կեանքը , — ըլլա՛յ amateur խմբագիր , ըլլա՛յ արուեստով խմբագիր , — ենթադրուածին պէս հեշտ ու վարդապոյն

չէ, եւ վայրկեաններ կան ուր օրն ի բուն բանող արհեստաւորի մը աշխատանքին նախանձիկ կուտայ: Բարոյական գոհացումը, մտքի ու սրտի վայելքը զոր կը պարգեւէ անիկա երբեմն, միակ հաճոյքը ու վարձատրութիւնը կը մնան, — կարուած ճամբուն երկարութիւնը դիտելու եւ զայն յիշուած

ու գեղեցկացած տեսնելու գոհունակութեանը հետ, զոր իր էն լայն առումով կուհենայ այսօր Մասիսին ծերունի եւ յարգելի արտօնատէրը՝ խմբագրական ասպարէզը ընդգրկելէն յիսուն տարի ետքը:

Տ. Ա.

Մասիսի արտօնատէրը ու խմբագրութիւնը իրենց շերտադին շնորհակալութիւնը կը յայտնեն այն համակրական տողերուն համար որով Արեւելք, Բիւզանդիոն, Մանգոլմեի էփեսար եւ Սուրհանդակ շարթուս մէջ յաջորդաբար շնորհաւորեցին այս թերթին յիսնամեակը, գնահատումի արտայայտութիւններով զորս աւելի կը սիրենք իրենց պաշտօնակցի բարեացակամութեանը վերադարձ: Շնորհակալութիւն նաեւ Մոնիդէօն Օռիանդալի եւ Իզմիրի Ամալթէա յունարէն լրագրին, որոնք սովէ առաջ բարեացակամ յիշատակութիւն մը ըրած էին Մասիսի հրատարակման յիսուներորդ տարին լրմանը առթիւ:

ԵՐԿՈՒՔԻ ԲԱԺՆՈՒՎԾ

Ա.

ԵՂԻԱ ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

Շարք յիշատակներու գոր պիտի փորձեմ պարբերաբար յանձնել Մասիսին, երկուքի բաժնած էի անցեալները: Առաջինը վարժապետական կեանքի շուրջը պիտի դառնայ ու սլացիկ պատկերացումը պիտի ըլլայ սիրուած ու անհետացած դեմքերու որոնք այլեւս անցեալին կը պատկանին: Իսկ երկրորդ մասը նիւթ պիտի առնէ իրեն՝ օրուան ապրուած կեանքը, վաճառատններու անլոյս խորերը: Ու եթէ վարժապետի կեանքը զգացումներով նկատեմ, պիտի քոյրում սակայն շուկայինը իր բիւր մերկութեանը մէջ, բնական ու առանց գունաւորման ուր եւ է փորձի: Առաջինը սրտի, երկրորդը հոգիի աշխարհով դիտելու մէջ կը կայանայ միակ տարբերութիւնը:

Եղիայով պիտի սկսիմ:

Իր վերջին երգերը Ազգ. Հիւանդանոցէն

լսեցի: Էմմանուէլ աէ Պարոյի պէս Աստուծոյ ուղղուած հառաչներով փակեց իր կարգի բերքեւումը: Յիշատակներու հետ կ'ապրէ անոնցմով կ'ապրի, ու այդ դալկահար ստուերներուն առթած հեշտանքներուն քով կը մտնայ գրիչը:

Զօհրապին պէս զանի «չլացած» մը պիտի չի կոչեմ, ոչ ալ Բօտաքին նման՝ նծարկ մէկ թաթը պիտի դնեմ զանի, Մրմրին հետ քով քովի: Եղիան յարափոփոխ, Մրմրը իր Աշխուիսին պէս անփոփոխ դտած եմ: Երեւութապէս ամէն գոյն փոխած է Եղիան պահելով սրտին մեղամաղձոտ սեւը սակայն Այդ է իր բնորոշ ու անորոշ պատկերը, զորինք միայն գուցէ կարող ըլլայ նկարել դաստակով աչքերը սրած մէկ միջոցին:

Անցեալին մէջ հակասութիւններու բաթ մը գծած է իր գրիչով: Միւսէն պաշտած միջոցին, Հիդուէն ալ անդաւորած է անոր քով Դրականին ու վերացականին ծայրագոյն եզրերը կանգնած կերեւայ շարունակ, ու ստիպակի բիւր ճուրջիւնը լսած միջոցով ուղեր հաւաալ թէ ամպերուն մէջ ընդհատ թեւածող խորիւտ արծիւը կամ գունդներու խողովքը մրմռացող հոգին նայեալ ըլլան:

Գիտուն մը չէ՛ եղած , ոչ ալ գրագէտ մը իր իսկական առումով , թէեւ գիտութիւնն ու գրականութիւնը սիրած եւ Բասդէօնն ու Հիւկօն աստուածացուցած ըլլայ :

Մտքին կազդուրմանը համար Բառարան չինելն ալ պիտի չի յիշեմ , նկատելով բոլոր այն գործերը սուրբ , որոնց վրայ համետ մարդու մը ճակտին քրտինքը կը կաթիլ ֆինադատ մը չէ եղած ու չէր ալ կրնար ըլլալ , որովհետեւ քննադատը վերաբոյժին պէս երկաթէ մատներ ունենալու է քարացած ջիղերով . նշգրտելու ուղածին՝ պէս շարժելու համար :

Հոգիներուն մէջ հատ մը միայն ճանչցած եմ հանճարի ամէն խոյանքներուն տիրապետ , որ քիչ մը ատեն աշխարհի հողը հագաւ Վոլթէն անունին տակ :

Եղիան բանաստեղծ է :

Անհունապէս զգայուն , իր ամէն մէկ վայրկեանը օրհասականի մը վերջին ժամուն ցնցումներովն է լեցուն :

Մնայուն կռիւ մը ունի իր եսին դէմ , միեւնոյն ատեն ինքնամոլի մը չափ կը պաշտէ զայն : Կ'ուզէ որ ամէնքը սիրեն զինքը , եւ երբ ամէն նայուածք իրեն կ'ուզուին , ինքը Հիմալայան կը նայի կամ Վէսաներուն մէջ կը խորասուզի :

Կը զայրանայ երբ գարունները կը խամրին եւ վարդը՝ իր թերթերուն կարմիրը կը կորսնցունէ , եւ անկարող բնութեան դէմ մաքառելու , կը կոտրէ գրիչը ու արտասուել կը սկսի :

Սէրը կը պաշտէ՝ անոր զիականալէն վերջը , կը յիշէ ժպիտները երբ անոնք անվերադարձ են այլ եւս , շուարած կը հարցունէ զուարթութեան բնականողին , ու մոռնալով Կէօք Սուլին ու Մօտա Պուռնին , անգունակներուն կը դառնայ մտամոլոր :

«Մէկ ձայն զոչէ ինձ 'ի խորոց
Նիրվանան է հանգիստն հոգեց» :

* * *

Այս երկու տողերուն դառնութիւնը չի ներկայի՛ իրեն : Ռամայանն ու Սագունդալան իրենց պարփակած վիհին վրայ հնդկական երկինքներու կապոյտը տարածած են ու

անոնց երգած Նիրվանան , արեւելեան խունկերու եւ կնդրուկներու բուրումներովը հեշտաւէտ , չեմ հաւատացած երբեք , թէ հոգիներու բացարձակ անէացումը եղած ըլլայ : Սիտտարթան՝ իր երկունքին մէջ , գեղանոյշ Եագոտարայի աչքերուն գինովութիւնը ըմպող Սիտտարթան անապատներու իր մենութեան օրերուն երբ կը ստեղծէր Նիրվանան , մոռացումին հեշտանքը միայն կ'ուզէր երգել , աստիճանաւոր մոռացում մը որ բացարձակին պիտի յանգէր : Ճշմարիտ բանաստեղծները , որ առաջին եսամոլները եղած են այս հոգագունտին , երբեք չեն կարողացած հասնալ կամ իրենց մտածումին մէջ իրականացունել բացարձակ ոչնչութիւնը :

Ու Սիտտարթա յաւիտենական Էվէրէսթը իր աչքին դէմ , հնդկական մնայուն գարուններու դալարութեանը մէջ , ու Եագոտարայի ժպիտները իր ֆաքիրի հրատապ հոգիին խորը , չեմ կարծեր թէ Նիրվանայով վերջնական ջնջումը արտայայտած ըլլայ :

Նիրվանան մոռացումն է այս աշխարհի վիշտերուն : Այդ վարդապետութիւնը նպատակ ունէր տարաբաղդ էակներու ներշնչել , միւս կողմի յաւերժական հանգիստին՝ այս աշխարհին մէջ առթիւ կրցած սփոփանքը :

Եղիան նախընտրած է Նիրվանան , դերագոյն մոռացումը , եւ եթէ վայրկեանական ցնցումներու ու յուսահատութեանց արդիւնք չըլլալով՝ իր մնայուն հաւատքը կազմած է ասիկայ անցեալին մէջ , կը ցաւիմ իր վրայ , գիանալով իր հոգեկան տառապանքները , ի՛ր կ'ըսեմ , յիշելով իր տագնապները աշխարհի՛ բոպէական մոռացումներուն խակ հանդէպ :

* * *

Գատըգիւղէն «Հաղիւղի մենարանը» տեղափոխուելու վրայ էր — ինչպէս կոչեցին ատենօք — երբ դաւառի հեռաւոր խորերէն կուգայի Գատըգիւղ հաստատուիլ ,

Հոգեով միշտ մանուկ , սրտով պեւոր . . .

Առաջին անգամ բնական էր որ Եղիան տեսնել ուզէի : Անոր պատկերը առասպելական բան մը եղած էր Եփրատ Գօլէճի շրջանակներուն մէջ , Ան՝ սէրէն աւելի բան մը

զրած էր երգերուն խորը : Սրտի ցաւեր չու-
նէր այդ մարդը : Իր ժամանակին երգիչն էր
ու սիրոյ արցունքը չէ՛ր լացած միայն :

Նղբայրակիցս Ռուբէն Զարդարեան , նա-
մակով կը յանձնարարէր «Գրականութեան
սուրբին» իր բարեւեները տանիլ : Կրնաք ծի-
ծաղիլ ուղածնուդ չափ , սակայն ըսեմ թէ
քանի մը օր մտածեցի իրեն այցելելու համար :

Գուցէ չընդունէր զիս : Ես ո՛վ , ա՛ն ով ,

Վերջապէս բարեկամ մը հասկցաւ փա-
փաքս ու առաջարկեց միասին երթալ : Առա-
ջին տեսակցութենէս բան մը չեմ յիշեր :
Ճերմակ երկար չափիկ մը հագած էր հա-
գուստին վրայէն : Մագերը խնամով սանաւորած ,
սեւ մօրուք , նիհար ու քիչ մըն ալ կարծու-
հասակ երիտասարդ մը : Միտակ էր այն օրը ,
Բնաւ խնդալ չունէր : Լուրջ ու քիչ մըն ալ
մեղաւորձօտ , Երկար չի կեցանք : Կը վախ-
նայի զինքը նեղելէ : Ժամանակը սուղ է , կը
մտածէի , գրեւորն արգելք չըլլամ :

Խեղճ Նղիա :

Օրեր ետքը , երբ ա՛լ մտերմացանք իրա-
րու , կ'երթայի յաճախ տեսնելու զինքը :
Իրեն սովորական ու մեղեդիով վիշտերը ունէր
որոնցմէ անբաժան ապրիլ կ'ուղէր կարծես :

«Սիրէ սոխակ զոստախտ , դալարագեղ անտառակ ,
Շուրջ զծաղիօք ծափառին խօլ Թիթեռնիկն ու մեղուն» :

Իսկ Նղիան՝ իր «ամայի ծովափանց» սիրու-
հարն էր մնայուն :

Վարժապետութիւնը թողած էր այն ասեն ,
Հիմա կը զգամ , ինչ որ ինք կը զգար այն
ատեն : Մանկութեան աշխարհին մէջ ապրե-
լէն վերջը , մենութիւնը առնելի է պարզապէս
Դուն անծանօթ մը կը դառնաս նոյն իսկ քու
եսիդ ու կը թողուս որ երազները առնեն
քեզ ամպերուն պէս տանին :

Գատրգիւղը թողելէն առաջ ինծի հրաժեշ-
տի գիր մը ուղղած էր — ես Արամեանն էի
այն օրերուն — ոտանաւորով մը միասին :
Յօդուածիս սահմանը չի ներեր ամբողջու-
թիւնը արտատպելու : Մօրը ուղղած էր ու
չեմ յիշեր մեր մէջ բանաստեղծ մը այնչափ
մօտ մայրենի յայտատակներու , որչափ Նղիան :

Ահա վերջին տողերը .

Գոնէ մայր իմ , զիս առանձին
Ձի Թողէիր աշխարհի մէջ ,
Խաղաղ նայուածքդ ամօրէի
Կամիդ վառած կրակն անշէջ . . .

Հասցիւղ իր պապենական տունը քա-
ուեցաւ Նղիան , որչափ կը յիշեմ , մէկ քանի
տարիքին առած ազգականներու տնակէն՝ իր
տնակը պարտէզով մը բաժնուած , թաղուած
խորը իր գրադարանին : Գատրգիւղի սիրելի-
ները թողուց , խնայողբար ապրելով՝ ոչ մէկը
չի նեղելու համար , թէեւ շատերը վշտացան ,
ու անոնցմէ աւելի , վշտացաւ ինքը Մօտ-
Պուռնին թողելուն համար , որուն անորոյ
մէկ նմանութիւնը , սլափկերը , զրած էր շա-
րունակ աչքին դիմացը , կապոյտ եւ անալի
ու արեւով ողողուն ծովու պատկեր մը , որ
շարունակաբար աղուոր ու արտագին յիշա-
տակներու զուգորդութիւնը պիտի բերէր իրեն :

Ի զուր մոռացումին զիմեց սակայն : Բա-
րեկամները անպակաս էին քովէն եւ ինքը
անպակաս էր թերթերէն , շաբաթը կամ եր-
կու շաբաթը մէկ անգամ իր երկարածիք ու
փառաւոր մականունը հանգչեցունելով յոդ-
ուածի մը ստորոտը :

* * *

Մոխիր դարձած արտով մը հեռանալուս
Գատրգիւղի ափունքէն գէպի լեռներով չըր-
ջապատուած անհորիզոն խորքեր , արամագին
մնաս բարով մը եղաւ իմ : Ողբացեալ Մկըր-
տիչ Շահնազարեանի հետ էինք , առանց բառ
մը խօսիլ կարենալու սեղմեցի երկուքին ալ
ձեռքը :

Տարիներով լռեց Նղիան , հազիւ քանի
մը կտոր բան գրեց , Հիւանդ է , կ'ըսէին : Քա-
նի մը տարի առաջ յանկարծական յարգումով
մը ամէն տեղ սկսաւ գրել : Այդ ժամանակի
զրածներուն մէջ մէկ արձակ — «Մեր Պո-
ֆօրը» — եւ մէկ ոտանաւոր կը յիշեմ
որուն մէջ Աստուծոյ ուղղելով խօսքը կ'ըսէր .

. . . արարչութիւնդ ալ հինգաւ :

Այդ երկուքը վերջին տարիներու իր միակ
բանաստեղծութիւնները եղան զորս կարելի է
դասաւորել իր Գողթաւ երգերուն , Անգեղ
երգին եւ Միւսակին քով :

Լռութենէ մը յետոյ , որ նորէն տարի
տեւեց , վերսկսաւ , Հիւանդանոցի մէջէն :

«Մեռելներու եւ Աստուծոյ մօտիկէն» լսելի ընել իր քնարին չեչակերը :

Այս վերջին անգամներուն Նիրվանա բառին չի հանդիպեցայ իր գրածներուն մէջ : Մեռելներու աշխարհին եւ Աստուծոյ մօտիկէն մտածեմ թէ գուցէ տեսա՛ւ ինքը անբաւականը զեղուն հաւատքով, յոյսով ու սիրով տառապողներու անկողնին քով, մտածելով անցուց իր երկար ու մենաւոր ժամերը :

Բանաստեղծը ճանչցած եմ, ըսի, իր մէջ : Թէեւ իր ազգերը Դուբրանի մեղեդիներուն ներգաշակուելով չունին, սակայն խռովքը որ դուրս կը նետուի իր տողերէն, ահա որ մտածումներու վերեւ որոտացող իր ինքնայատուկ չեչուքը, ճշմարիտ բանաստեղծի տեղը կուտան իրեն, — բանաստեղծ իր ոտանառակութիւնն ու արձակին մէջ հաւատարապէս :

Մինչեւ հիմա ճանչցած էի իր մէջ չըջմուխիկ հուրը, շիրմէ շիրիմ ուստոստուն ու թափառիկ, իբրեւ իր բարեկամը՝ տարիներով զատուած կը սպասեմ իր նոր երգերուն, կը փափաքեիմ զարուսներու եւ մայիսներու ծոցը իր վերադարձին, ու կը փափաքեիմ որ իր նոր երգերը ողողուն ըլլան արեւով ու սիրով, որ գառնագին ծաղկերն անհետանան յաւիտ իր լայն ճակարի եւ անոնց տեղ կարմիր ու պայծառ զուարթութիւնը իր Ժպտագեղ համբոյրը գրողմէ մայրենի համբոյրին նման :

Իգմիր

Ռ. ՈՐԲԵՐԵԱՆ

ՎԻՔԹՈՐ ՀԻԼԿՈՅԻ ԾՆՆԴԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԸ

Գիտցուած բան մըն է որ, Ֆրանսացին պարապ չի կրնար կենալ : Անպատճառ պէտք է բան մը որ իր միաքը ստատկապէս զրաղեցնէ : Մէկ տարին Affaire, միւս տարին Արուստահանդէսը, ուրիշ տարիներ ալ ուրիշ բաներ : Այս տարի կարգը Հիւկոյին եկած է, բան մը որ սակայն ոչ անակնկալ մըն է, ոչ ալ զիպուածի արդիւնք, եւ քիչ արժանաւորներէն ալ չէ :

ԺԹՐԳ. դարու մեծագոյն գրողին ծնունդին հարիւրամեակն է առ տարի : Եւ այդ իսկ կը բաւէ արդէն որ ամբողջ տարին իրեն նուիրուի : Այդ առիթով, Ֆրանսայի մէջ, իրենց «Ազգային բանաստեղծ»ին, — ինչպէս կը կոչեն զայն հիմա իրաւունքով — ի պատիւ պիտի սարքուին ամենափայլուն հանդէսներ, եւ յարգանքի ու հիացումի արտայայտուած թիւններ որոնք երբեք կատարուած ըլլան այդքան միահամուռ կերպով, իրեն ողջութեանը ատեն ու անմոռանալիօրէն մեծահանդէս ու վեհաշուք իր յուղարկաւորութենէն ի վեր :

Տարին սկիզբէն ի վեր Ֆրանսական թերթերը իրմով լեցուած են : Իր անունին շուրջ հիւսուած փառարանութիւններ, իր գրական կեանքին ձօնուելու պայմանով գրական մըրցումներ, ոտանաւորի մրցումներ, եւայլն եւայլն, ամէն կողմէ կը բուսնին ինքնաբերաբար : Տարին Հիւկոյինն է, ինչպէս ըսի, եւ արդէն իսկ ներկայ տարին Հիւկոյապաշտ ճարտի սկսած են յորջորջել : (Année Hugolâtre) :

Իր ծնունդին տարեգարձին օրը իսկ, Վիքթոր Հիւկո անունը կրող հրապարակին վրայ, բոլոր պաշտօնական մարմիններու ներկայութեանը, Հանրապետութեան նախագահը Պ. Լուպէ պիտի մերկացնէ իր ծածկութենէն մեծանուն Վարպետին արձանը՝ Ժամանակիսէն նշանաւոր քանդակագործներէն մէկուն ձեռքովը շինուած :

Վիքթոր Հիւկո՝ Ժայռի մը վրայ նստած, կ'երազէ : Ժայռին ստորոտը, այլաբանական չորս դէմքեր, փառքի դափնեպսակներ կ'երկարեն բանաստեղծին. անոնցմէ մէկը Դիւցազներգութեան մուսան կը ներկայացնէ, մէկը Տաղաչափութեան մուսան, միւսը Ողբերգութեան մուսան եւ վերջինը Երգեմաբանութեան մուսան, Բոլոր այդ մուսանները, պրօնգէ թափուած, երեքական մեթր բարձրութիւն ունին. իսկ Վիքթոր Հիւկո ինք՝ չորս մէթր : Չորս հարթաքանդակներ կ'ամբողջացնեն յիշակերտը եւ կը ներկայացնեն բանաստեղծ ու վիպասան Վիքթոր Հիւկոն, փիլիսոփայ Վիքթոր Հիւկոն, ատենաբան Վիքթոր Հիւկոն, եւ պատմաբան Վիքթոր Հիւկոն : Յիշատակարանին պատուանդանին

վրայ սա պարզ արձանագրութիւնը միայն կայ .

Վ Ի Գ Թ Օ Ր Հ Ի Ի Կ Օ

1802 — 1885

Ատիկա պիտի բաւէր արդէն :

Շատ տարի չընէր որ Եւրոպական Մասնագրութիւններով շահագրգռուիլ սկսած ենք , այն ալ Ֆրանսերէն լեզուին միջնորդը եւ գրեթէ ԺԹԳ. գարու մեծ Վարպետին՝ գրական հորիզոնին վրայ մեծապայծառ շող-չողացած ատենը : Որով շատ բնական է որ , բոլոր դարերու մեծ միտքերէն աւելի , ինք իր պատկառանքոտ ու աշխարհ լեցնող ձայնովը լեցուցած ըլլայ նաեւ այն ատենի զըրական մեր մարդոց ականջները , իր ազդեցութեան տակը թմրեցուցած ըլլայ բոլոր մեր կարկառուն միտքերը , եւ անոր անունովը երգունքացած ըլլան , գրականութեան անունով ճառող բոլոր մեր իմաստունները :

Եղած է ատեն մը ուր Ռոմանթիզմը , իր բոլոր մեծախօսութիւններովը , լայնախոհութիւններովը , խոյացումներովը , պայմանագրականութիւններէ դուրս վիճակովը , եւ տարօրինակութիւններովը՝ խիստ յարմար եկած է գրեթէ նոյն տրամագրութիւններուն մէջը գտնուող մեր գրական մարդոց , ընթերցողներուն ու ժողովուրդին ճաշակներուն , ճշգրտումներուն , սլացքներուն : Եւ այդ պահուն Հիւկոյի մէկ երկու գործերուն կրկին թարգմանութիւնները զինքը մեր մէջ դրած են պաշտուելու աստիճան հիացուած կուռքի մը պատուանդանին վրայ : Եւ անկէց ի վեր ոչինչ կրցած է պակսեցնել այդ հիացումը :

Ատեն մը եղած է որ իր նշանաւոր մէկ վէպին հերոսները , վերջին աստիճան ժողովրդական եղած են մեր մէջ ալ եւ խիստ շատ անգամներ , վկայութիւններ , նմանութիւններ , բաղդատութիւններ մէջ բերուած են մեր մէջ ապրող անձերու , տեղի ունեցած միջադէպներու եւ կեանքի երեւոյթներուն առիթով :

Այսպէս , կը յիշեմ որ հազուադուրս բացառութեամբ մեր բարի , անյիշաչար ու ողորմած մեր մէկ եկեղեցականին անունը յիշա-

տակուած է Միրիէլ կալիսկոպոսին վերյուշումովը . անոք , անօգնական որբունհներ՝ որոնք Քօղէթը յիշեցուցած են , սիրոյ կեանքեր՝ որոնք «բարի մը տակ սիրա մը»ին ազդեցութեանը տակ բարախած են : Ազատ մարդիկներ՝ որոնք ինքզինքնին տեսած են Թէնարաթիւներուն անձին մէջ : Եւ այդ իսկ կ'ապացուցանէ թէ ո՛ր աստիճան իրական ու ապրուած հանգամանք մը ունին գրուագրները անոր , ինչ որ միակ գրաւականն է գործի մը ապրեցումը :

Բայց այդ անբաղդատելի վէպին մէջ ուր թերութիւնները ու յատկութիւնները իրար կը խաչաձեւեն ինչպէս ամէն մարդկային բանի մէջ , ուր ժամանակին ու միջավայրին ուսումնասիրութիւնը , հետաորութիւնը , փիլիսոփայութիւնը , ուսուցիկութիւնը , բանաստեղծութիւնը սերտօրէն իրար կընդգրկեն , կայ հերոսունհի մը , թիկի մը , որ ամէնէն աւելի կը յուզէ ընթերցողը , ամէնէն աւելի կը շահագրգռէ , ամէնէն աւելի կ'արգահատեցնէ , եւ ամենէն տարաբաղդ վախճանը կ'ունենայ : Յանթիւնն է ան , Քօղէթին մայրը , տառապած , չարչարուած , մեռած , աղքատներու փոքր նետուած խեղճ այն կնիկը , որ ուրիշին հաճոյքին զոհ երթալէն ետքը , հորմէն լքուած անբաղդ իր աղջկանը հաց ճարելու համար , մազերը կը կտրէ կը ծախէ , ակոսները կը քաշէ կը ծախէ , մարմինը կը ծախէ . . . : Լքուած աղջկան , անձնագոհ մօր տառապած կնկան , անստգիւտ , անմոռանալի , հրաշալի տիպար մը , որ ոչ մէկ աչքի առջեւէ անցած է , տռանց այդ աչքէն արցունք մը քամելու :

Եւ այսօր բարեբաղդութիւն մըն է որ , այդքան աշխարհածանօթ , այդքան գրաւիչօրէն գեղեցիկ ու հոգեխառով նկարագիրի մը բուն ծագումը գտնուած է , պատկառելի հեղինակին թուղթերուն մէջէն , նոյն իսկ իր մէն պոստուած , օրագրի ձեւով : Ֆրանսայի գրեթէ բոլոր լրագիրները արտասուպեցին զայն , Բօլ Մէօրիսի ջանքերուն շնորհիւր վերջերս հրատարակուած Կեանքիս Յետ-Գրութեանը անուն հատորէն : Մենք ալ մեր կողմէն , մեզի համար պարտք մը եւ բաղդատութիւն մը կը սեպենք , այս հանդիսաւոր

առիթով ներկայացնել զայն Մասիսի ընթերցողներուն, որոնց մէջ ամենէն աւելի պէտք է գտնուած ըլլան՝ Փանթիկի դժբաղդ կեանքին ու վախճանին վրայ խորհած, յուզուած ու արցունք թափած էակներ, Թշուառներուն ընթերցումով։

* *

«Վիքթոր Հիւկօ, յունուար 9ի այդ օրը չառ կանուխ մեկնեցաւ Տիկին տը Ժիրարտէնի տունէն։ Զիւնը կը տեղար ծիւ ծիւ։ Ամառուան թեթեւ կօշիկներ հագած էր եւ երբ փողոց ելաւ, տեսաւ որ անկարելի պիտի ըլլար ոտքով տուն վերադառնալ, Թէպու փողոցէն վար իջաւ, որովհետեւ գիտէր թէ փողոցին ծայրը, պուլվարին վրայ կառքերու հրապարակ մը կար։ Հոն ո՛չ մէկ կառք չի գտաւ։ Սպասեց որ գան։ Այդպէս երթալ գալու վրայ էր, երբ տեսաւ չիք ու ճոխ հագուած երիտասարդ մը որ ձեռքաւ, ափ մը ձիւն առաւ գետնէն եւ հոն պուլվարին անկիւնը կեցած, մերկուս (décolletée) չրջագետնով աղջկան մը կոնակին ճիշդ մէջտեղին փակցուց։ Աղջիկը սուր ճիչ մը արձակեց, յարձակեցաւ սպրկիկ պարոնին վրայ եւ ծեծ մը քաշեց։ Երիտասարդը հարուածները փոխարինեց Կինը՝ նոյնպէս, եւ կոխը երթալով սաստկանալու վրայ էր, այն աստիճան որ, ոստիկանները վերջապէս հասան։

Աղջիկը բռնեցին, եւ մարդը թող տուին։ Դժբաղդ աղջիկը երբոր տեսաւ որ զինքը ձերբակալելու վրայ են, դիմադրեց։

— Ես բան մը չըրի, կըսէր, պարոնը ըրաւ։ Ես յանցանք չունիմ, թողէ՛ք զիս, կաղաչեմ, Իրա՛ւ որ, ես բան մը չըրի։

Ոստիկանները առանց մտիկ ընելու կը պատասխանէին։

— Օ՛հ, քալէ նայինք, վեց ամիսը ուտես պիտի։

Խեղճ աղջիկը, այս խօսքին վրայ թէ «վեց ամիսը ուտես պիտի», նորէն կը ջանար ինքզինքը արդարացնել եւ իր թախանձանքները կը կրկնապատկէր։ Ոստիկանները, առանց զգածուելու անոր արցունքներէն, քըչեցին տարին զայն մօտակայ պահականոցը։ Վիքթոր Հիւկօ, դժբաղդ աղջկան վիճակին ակամայ շահագրգռուած, ետեւնուն կ'եր-

թար, խուռն այն ամբօխին մէջէն որ այս տեսակ պարագաներու մէջ չուտ մը կը կազմուի։ Երբոր պահականոց հասան, Վիքթոր Հիւկօ խորհեցաւ ներս մտնել եւ աղջկանը թեր ելլալ։ Բայց մտածեց միեւնոյն տեսն որ հանրածանօթ մէկն էր ինք եւ այդ տեսակ գործի մը խառնուելովը առիթ պիտի տար օրագրողներուն որ ամէն տեսակ աղտոտ կատակներ ընեն իր չուրջը։ Զերկարենք, ներս չի մտաւ։

Այն սրահը ուր տարին դրին աղջիկը, գետնայարկն էր եւ փողոցին վրայ կը նայէր։ Պատուհանէն ներս նայեցաւ հասկընալու համար թէ ի՞նչ կանցնի կը դառնայ։ Տեսաւ տարաքաղդ կինը որ յուսահատութեանէն գետնէ գետին կը զարնուէր, մօզերը կը փետտէր, արգահատեցաւ, սկսաւ խորհիլ եւ վերջապէս որոշեց ներս մտնել։

Երբոր ներս մտաւ, մարդ մը որ մոմով լուսաւորուած սեղանի մը առջին նստած կը գրէր, ետին դարձաւ եւ կարուկ ու վճռական ձայնով մը.

— Ի՞նչ կուզէք, պարոն, ըսաւ,

— Պարոն, դուրսը պատահածը ես աչքովս տեսայ, եւ կուգամ տեսածս զուրկելով՝ այս կնիկանը նպաստաւոր վկայութիւն տալու։

Այս խօսքերուն վրայ, կինը զարմացու մէն ապուշ կտրած լռեց եւ Վիքթոր Հիւկօյին երեսը նայեցաւ։

— Զեր վկայութիւնը, պարոն, որչափ ալ որ չահեկան ըլլայ, չի կրնար արժէք մը ունենալ։ Այս աղջիկը յանցաւոր է հանրային պողոտայի մը վրայ մարդ մը ծեծած ըլլալուն համար, որով վեց ամիս բանտարկութիւն պիտի կրէ։

Աղջիկը նորէն սկսաւ հեծկտալ, կանչուրուտել, թապլտկիլ, իր քովը փութացած ուրիշ աղջիկներ, կըսէին իրեն.

— Քեզի այցելութեան կուգանք մենք, Հանդարտէ՛, Քեզի ձերմակեղէն կը բերենք մենք, Հիմակուհիմա ա՛ռ սըվիկա։

Եւ դրամ ու շաքարեղէն կուտային անոր։

— Պարոն, ըսաւ այն տանն Վիքթոր Հիւկօ. ով ըլլալս թէոր գիտնաք, ձեր լեզուն ու շեշտը պիտի փոխէք թերեւս եւ պիտի անսաք ըսածիս։

— Ո՞վ էք նայիմ, պարոն, հարցուց Վիքթոր Հիւկօ յայնչեց իր անունը : Ոստիկանացեալը հազար ներսդուծիւն խնդրեց, քաղաքավար դառնալով :

Վիքթոր Հիւկօ պատմեց ինչ որ տեսած էր, ինչ որ իր աչքերովը տեսած էր, պատմեց թէ պարոն մը ձիւնագուռնա մը շինեւր ու այդ աղջկանը կռնակին փակցուցեր էր, թէ աղջիկը որ ոչ իսկ տեսեր էր այդ պարոնը, բռնն ցաւ մը արտայայտող ձիւ մըն էր արծակիւր : Թէ իրաւ է որ մարդուն իջեցուցեր էր քանի մը հատ, բայց իրաւունքով : Թէ ըրածին կոպիտութենէն զատ, ձիւնին պատճառած յանկարծական ու սաստիկ ցրտառութիւնը կրնար թերեւս աւելի մեծ վնաս մը պատճառել : Թէ փոխանակ այդ աղջկան, — որ մայր մը կամ զաւակ մը՝ ունէր թեւեւս, — այնքան թշուառօրէն վատարկած հացին արգելք ըլլալու, մարդը պէտք էր զատապարտել վնասներու հատուցումի մը, քանի որ ան էր այդ փորձին պատասխանատու յանցաւորը : Վերջապէս, աղջկանը տեղը երիտասարդը պէտք էին ձերբակալել :

Այս պաշտպանողականին ատենը, աղջիկը հետզհետէ աւելի զարմացած, ուրախութենէն եւ յուզումէն կը խօլանար :

— Ի՞նչ բարի էք, պարոն, կըսէր : Աստուած՝ իմ, ի՞նչ լարի էք : Բայց ոչ իսկ տեսած եմ ձեզի, ոչ ալ կը ճանչնամ :

Ոստիկանութեան պաշտօնեան ըսաւ Վիքթոր Հիւկոյին .

— Կը հաւատամ ձեր բոլոր ըսածին, պարոն, բայց ոստիկանները իրենց վկայութիւնը տուած են արդէն, եւ տեղեկագիրը սկսած է պատրաստուիլ : Ապահով կրնաք ըլլալ որ ձեր վկայութիւնն ալ պիտի արձանագրուի տեղեկագրին մէջը : Բայց օրէնքը իր տեղը պէտք է որ երթայ, որով չեմ կրնար հիմա այս աղջիկը ազատ արձակել :

— Ինչպէ՞ս, պարոն, ձեզի ճշմարտութիւնը պատմելէս ետքը, — ճշմարտութիւն՝ որուն վրայ կարելի չէ որ կասկածիք, չէք կասկածիր արդէն, գիտեմ, — նորէն վա՞ր պիտի գնէք զայն : Բայց ասիկա անիրաւութիւն է :

— Մէկ պարագայի մէջ միայն, պարոն,

կրնամ ընել ձեր ըսածը, երբոր հաճիք ստորագրել ձեր վկայութեան տակը : Կընդունի՞ք :

— Եթէ այս կնիկան ազատ արձակուիլը իմ ստորագրութենէս կախում ունի, հրամայէ՞ք :

Եւ Վիքթոր Հիւկօ ստորագրեց : »

* *

Վերջացնելու ատենս, մէկ երկու պզտիկ, չահեկան մանրամասնութիւններ տուած ըլլալու համար ըսեմ որ, ոչ ոք կ'անգիտանայ թէ Հիւկօ ներկայ եւ անցեալ ժամանակներու ամենամեծ ու վիթխարի արտադրողներէն մէկը եղած է : Ահագին քանակութիւններով ձեռագիր թողած է, եւ տարակոյս չիկայ որ որակը չէ որ վնասուած է այդ առատութեանէն, Պատուական գրողին մէկը այդ առիթով ըսած է տեղ մը .

«Մեծ մարդուն թողած ձեռագիրի մթերքը անսպառելի է : Դեռ ոտանաւորի հազարաւոր շարքեր կան հոն, որոնք չեն հրատարակուած եւ հրատարակուելիք ալ չունին : Այդ առատութեան հանդէպ՝ մարդ ընկճուած կը մնայ, ինչպէս պիտի ըլլար բնութեան մէկ ուժին հանդէպ, չեռներու վիթխարի գանգուածին կամ ծովերու անհունութեան հանդէպ : Այսօր, մեր գրական վախ ապրոնները բան մը չեն կորսնցներ : Լրագիրներուն մէջը հազիւ թէ տաս-սասնըհինգ յօդուածներ մը կ'ածեն, եւ ահա անմիջապէս հատոր մը կը կազմեն : Վիքթոր Հիւկօ, իր դարակներուն խորը ձգած է որ հանգչին, գրական ամբողջ գանձեր՝ որոնք ուրիշ գրագէտի մը համարը պիտի կրնային չիւնել : Ասիկա անտարբերութիւն մըն է որ հանճարներուն յատուկ է . . . » :

Իրաւ է որ իր մեռնելէն ի վեր ընդարձակ ու յարգալի լռութիւն մը պահուած է իր վրայով եւ չատ քիչ առիթներու մէջ իր յիշատակը քրքրուած : Բայց ասիկա անտարբերութիւնը կամ մահուընէն ետքի անկումը չէ բնաւ, որ կարենար անբացատրելի թողուլ, այս տարուան մէջ իր յիշատակին լայնօրէն վերադարձումը : Եղաւ ատեն մը ուր մարդկութիւնը ա՛լ դերյազեցած էր իր մով եւ քիչ մը ատենի — տասնըութը տարի, — պէտք ունեցաւ ինքնամիովուելու, գնահատելու եւ վերջնական հանգարտ ու գիտ

կից սիրոյ մը ու յաւերժական անմահացումի մը արժանի ընելու համար զայն : Այդ բանին հկատմամբ ալ , միեւնոյն պատուական գրողին , Ատուֆ Պրիսօնին հետեւեալ հատուածովը կը վերջացնեմ .

«Այո՛ , այդ մարդուն բեղունութիւնը , ստեղծելու կարողութիւնը կը չփոթեն մեղի : Երբոր մեռաւ , ամէն մարդ մէյմէկ քիչ յոգնած էր Վիքթօր Հիւկոյէն : Իր փառքը չափէն աւելի մեծաշինք , չափէն աւելի ծաւալուն , չափէն աւելի համագրաւիչ եղած էր : Ամէն մարդ պէտքը կը զգար քիչ մը զայն հանդիստ ձգելու : Բայց տարիները անցան եւ հաւասարակշռութիւնը վերահաստատուեցաւ : Եւ ահա դարձեալ արեւը կը սկսի բարձրանալ հորիզոնին վրայ , բայց այս անգամ իր վերջնական ճառագայթումին մէջը :»

Օ. 2 - Ս.

Լ Ք Ա Ծ Ե Ս

Մին հպարտ հոգի , միւսը աւելծուած , Սրբի կեանքէն բառ մը փրսփրսացին Օր մը իրարու : Արդէն տառապած՝ Կ'ուզէին սիրել , սիրով լուսածին :

Հանդիպումներու մեջ խորհրդաւոր , Գողունի բափուած արցունքներու պէս՝ Անոնք ծրծեցին ինչ որ կար աղուոր Իրարու սրտին մեջ կարօտակեզ . . .

Իղձեր , անուրջներ , յոյսեր անկասկած՝ Խոյս տրւին օր մ'ալ ցաւով մ'անսահման , երբ իրենց կուրծքին տակ անհետացած Իտեալ սիրոյ ունայնը տեսան . . .

Ժամն եր բաժանման , օրջաճն անաւոր Համակերպութեան , սրբի պատրանքին , Ուր արձագանգի մը պէս հեռաւոր՝ երգ մը անձամօք կուլա՛ր սրտմագին :

Ու անվերադարձ , վարդ օրերէն վերջ , Տրոփուն՝ յուշովն հուսկ նայուածներու , Քանդրեւած հոգւոյն սուր կըսկիծին մեջ՝ Անոնք հրաժեշտ տրւին իրարու :

27 Յունուար 1902

Մ. ՈՒՂՈՒՐԼԵԱՆ

ՃԱՄԲՈՐԴԻ ՄԸ ՅՈՒՇԱՏԵՏՐԷՆ

6 Սեպտեմբեր 1901

Հ Ա Լ Գ Ի

Սիրելի բարեկամ ,

Երա՞զ է արդեօք թէ իրականութիւն :

Այս առտու հանգիստ քունէ մը կ'արթնանամ : Օղը յստակ եւ սքանչելի է : Պատըշգամը ելլելով կը տեսնեմ բոլորտիքս պարտէզներ ծառաստաններ , դալարաւէտ կոյտեր որոնց հաճոյքով կը թափանցեն աչքերս , քիչ մը անդին եղեւիններու անտառ մը , եւ աւելի անդին՝ կապոյտ ծովը :

Ո՛ր կը գանձում արդեօք , Զմայելի երա՞զ մըն է տեսածս թէ իրականութիւն : Քիչ մը վերջը կ'ուշաքերիմ եւ կը հասկընամ որ բարեկամի մը տունը հիւրասիրուած եմ , բարեկամ մը որ իր տաղանդով եւ բարի հոնգամանքներովը թէ՛ ազգին եւ թէ՛ օտարներու համակրութիւնը ու վստահութիւնը գրաւած է եւ այդ հոնգամանքներուն վերեւը մշտավառ կը պահէ բարեկամութեան ազնիւ զգացումը :

Օգին գեղեցկութիւնը , տեղւոյն հրապոյրը կը ստիպեն զիս առաւօտեան պտոյտ մը ընելու : Արեւը դեռ չէ ծագած : Կը մեկնիմ եւ քաղելով կ'անցնիմ հազարաւոր եղեւիններու անտառէն : Աչքերուս առջեւ կը ներկայանայ Յունաց Աստուածարանական մեծաշէն զըպրոցը՝ բլուրի մը վրայ , կարծես թէ սոյն զըպրոցին հիմնադիրները Աստուծոյ աւելի մերձեւալու համար այդ բարձր եւ սքանչելի վայրը ընտրած են : Ատոր առջեւ կը տեսնեմ փոքր ծոց մը , արեւմտեան կողմը Անթիպիոնի , որ հինաւուրց յիշատակներ ունի , եւ հեւսիտային կողմը աւելի հեռուն , աւելի բարձր՝ Մալթէփէ , Եագաճըք , Ալէմ Տաղ դեռ ստուերուած հորիզոնին մէջ բլուրներու շղթայէ մը եւ ներկայելով սիրային յիշատակներ , թէեւ աւարիներ իջած բլրան անոնց վրայ : Աւելի վեր Բենտիկ , Քարթալ . եւ դէպ ի արեւմուտք Կ. Պօլիս , իր եօթը բլուրները , որոնց վերեւ հպարտութեամբ կը կանգնին հոյակապ մըզկիթներ իրենց չքեղ միմարէներով զօրս առաւօտեան չոզիները կը շրջապատեն տեղ տեղ

ծիրանեգոյն , եւ այս ամէնը իրենց աննման ամբողջութեան մէջ՝ անմահն Այվագոյսքի լրձինն արժանի :

Կը քալեմ եւ որչափ կը քալեմ՝ այնչափ կը հրապուրուիմ կարմիր հողի վրայ կանանչ եղեւիններու անբաղդատելի գեղեցկութիւն-ներէն : Բնութեան պատկերները երթալով կը փոխուին , զիմացս ծովեզրը որուն մօտ կ'անց-նին կ'երթան ձկնորսի նաւակներ լռելեայն , Մարմարայի ծովը , շատ հեռուն կը նշմարեմ առագաստաւոր նաւ մը որուն կայմերը հո-րիզոնին մէջ կը նմանին արուեստական նոճի-ներու , ինչպէս զիտած է Վիքթոր Հիւկօ իր *Մոփու աշխատաւորներու* (Les travailleurs de la mer) մէջ , հաւանական է Թօքսիա , մեծ ձկնորսներու փոքր ժամադրավայրը : Չամ-Լիմանի հիւսիսային խորշին եզերքէն կ'անցնիմ , դէպ ի վեր , կ'ելլեմ հարթ ձամբէ մը : Այդ ձամբէն շեղելով կը տեսնեմ յոյն եկեղեցի մը , որուն մէջ սրբակօն եւ ալեւոր ճգնաւոր մը երստէն տարիներէ ի վեր չէ հաճեր քա-ղաք իջնելու՝ իր մաքուր քղանցքը մարդե-րու յարաբերութեան մէջ չարատաւորելու նպատակով եւ օրն ի բուն կ'աղօթէ՝ եղեր մարդկային մեղքերու փրկութեան համար : Այդ երանելի էակին հանգիստը չեմ ուզեր վրդովել : Կարելի է այս պահուն ալ խոր քունի մէջ կը ննջէր , Կանցնիմ հոտկէ : Արեւը ծագած է եւ կը նետէ փառաւորապէս այդ անտառին վրայ ճառագայթեայ պսակը , որուն շողերը ծառերու ոստերուն տակ հրճուանքով կ'ոստոստեն ու կը ցօլան : Չորսդիս կը նա-յիմ , Խալքի , այսինքն Հէյպլէի կղզին եւ , արարչագործութեան այս գոհարին վրայ կը գտնուիմ , հոյակապ գոհար մը յակինթեայ , որ զարդարուած է զմրիտեայ անտառներով եւ չրջապատուած արծաթափայլ ծովէ մը , որուն ալիքները արեգական ճառագայթներու ընդհարումէն վտակ առ վտակ ոսկե-փայլ կ'ըլլան : Հողիս ալ կը բարձրանայ , կը բարձրանայ դէպ ի երկինք եւ այս տառնձ-նութեան մէջ ես ալ նախանձելով ճգնաւորէն կը դառնամ դէպ ի արեւելք ու կ'աղօթեմ :

Հոս տեղ է , սիրելի բարեկամս , որ մարդս լոգանք կ'առնէ , պարզապէս արբիւս կ'ըլլայ

լոյսի , ջերմութեան եւ կեանքի մէջ , արար-չագործութեան այս սկզբնական ուրախու-թեանց մէջ , ինչպէս զիտած է ուրիշ տեղ մը եւ ուրիշ առթիւ Մէլքիոր աը Վօկիւէ գերա-կոմսը : Հոս է որ բնութեան անընդհատ գոր-ծող հիւթերը դէպ ի ուղեղ կ'ելլեն : Քիչ մը անդին կը նշմարեմ Յունաց առեւտրական մեծ դպրոցը որ ցոյց կուտայ Յունաց գործ-նական միտքը զոր լաւ ըմբռնած են նաեւ անոնց յաջորդող լուսաւորեալ սերունդները եւ մեծ դաս մը կ'ընծայէ ցոյց տալով որ ամէնէն բնական , ամէնէն մոգական տեղն իսկ մոռնալու է բանաստեղծութիւնը՝ չա՛ փնտռելու համար . . . :

Այդ դպրոցէն քիչ հեռու կը գիտեմ բլու-րին գագաթը ջաղացքի մը փլատակը ուր օր մը առաջ բարեկամս նեղ շաւիղէ մը առաջ-նորդած էր զիս եւ ուր տեսած էի . երիտա-սարդ եւ կայտառ ձկնորսներու եւ մանուսնոյ ձկնորսուհիներու խումբ մը , որոնք իրենց յատուկ գեղջական գոյնդգոյն չրջագգեսանե-րը հագած եւ անգսպելի յոյսերով սնած՝ ա-նընդհատ կը պարէին հին նուագարանի մը շեշտերով տեսակ մը չրջապար (farandole) եւ յետոյ բոջխան , աւանդական բոջխան :

Բայց այդ պարը , չպարը , աղմուկը եւ խայտանքը անհետ եղան հիմայ եւ անտառին մէջ դարձեալ առանձնութիւնը կը արեւ : Թռչուններուն զայլայլիկն ալ դադարած է : Ոչ ձայն կայ , ոչ շարժում : Չանձրանալ կը սկը-սիմ այդ վիճակը միակերպութիւն նկատելով՝ երբ յանկարծ հեռուէն կը տեսնեմ ոչխարնե-րու հօտ մը որ անտառը կը մտնէ . այդ հօ-տին ետեւէն հովիւը , պատանի մը , սրինգը ձեռքը բռնած՝ բնական երգ մը կը սուլէ , ե-րաժշտութիւն մը որուն ինչ ըլլալը ինքն ալ չգիտեր , չի հասկընար , բայց հաճութեամբ կը սուլէ առաւան զովին , եղեւիններու սար-սրնոց տերեւներու մէջէն եւ ինք ալ մերթ-ընդ մերթ քաղցր եւ ախուր յիշատակներով խառն , բայց հաճելի սարսուռ մը կ'աղղէ :

Ա՛հ , պարզամիտ հովիւ , այդ պահուն աւելի երջանիկ ես դու Տանթէներէ , Շէյքս-րիրներէ , Քօռնէյլներէ , Ռասիններէ , Հիւկօ-ներէ եւ մանաւանդ աշխարհը դժոխք կարծող Շոքենհաուերին նման յոռետեսներէ , որոնք չեն կրնար հասկնալ որ ատոր մէջէն կարելիին չափ լաւագոյն մասը ընտրել ու առնելու է :

ԳԷՈՐԳ ԳՈՒՂԼԻ

ՎԱՌԱՐԱՆԻՍ ԱՆԿԻՆԵՆ

ԿՐԾՆԱԿԱՆ ԹԵՐԹՈՆ

Թերթօն եւ . . . Նարեկ , ի՛նչ սիրուն հակադրութիւն , եւ ի՛նչ նորութիւն մանաւանդ , զոր պիտի ընծայեն մեզի Մանգումեի էֆենտր ու Քասիւմ , մեծ պահքի առջի օրէն : Անկեղծապէս պէտք է խոստովանիլ թէ այսօր քան ինքնատիպ գաղափար մը ո՛չ մէկ հայ օրագրող յղացած ու գործադրած էր տակաւին : Թերթօնի մասին մեր լրագրութեան բոլոր յառաջընթացները կը կայանար , մինչեւ հիմայ , Պոլսական կամ զաւառական կեանքէ վիպասանութիւն հրատարակելուն մէջ , իբրեւ գերազանցութիւն մը թարգմանուած վիպասանութիւններուն վրայ , ա՛ն ալ չա՛տ հազուադէպ կերպով : Որչափ ատեն որ թերթօնը լրագրին ընթերցումը յարատեւ պահելու միջոց մը նկատուի , միշտ պիտի ընտրուին ու թարգմանուին առամաղիք վէպերը , որոնց գործողութիւնները , տիպարները , տեսարանները վառ կը պահեն հետաքրքրութիւնը եւ օրեր կան ուր , գործիք մէջտեղ , փնտռել կուտան լրագիրը՝ ո՛չ թէ Թրանսփալի թուղթերուն գինը կամ Ազգ. Լուրերու բաժինը կարդացնելու համար քեզի , այլ գոհացում տալու անհամբերութեանդ թէ Տիկին մարգիզուհին , օրինակի համար , որ Պուլօնեի անտառէն կը վերադառնար կառքով , ատենին հասա՞ւ իր Ժամագրութեանը կամ Ամերիկացի միլիտատէրը քանի՞ հարիւր հազար տողարի գնեց իրեն ներկայացուած աղամանդը , որուն կեղծ ըլլալը չգիտես : Այս ընթերցողներուն համար , որոնք ահագին թիւ մը կը կազմեն մեր մէջ ալ , թերթօնը թատերաբեմին վարագոյնն է — թուղթէ վարագոյն — որ կը բացուի ամէն առտու կամ իրիկուն , սա տարբերութեամբ որ արարուածները շատ կարծեն ու ներկայացումը շատ երկար : Ատեն ատեն փորձեր եղած են , քանի մը լրագրապետներու կողմէ , թերթօնի ձեւին տակ հայերէնի վերածել գրական կամ գիտական գործ մը եւ կամ միջազգային համբաւ ունեցող հեղինակի մը մէկ գրուածքը , առանց

փոյթ ընելու թէ ընթերցողը — քիչ մնաց «յաճախօրք» պիտի ըսէի — ուրիշ բան կը փնտռէ : Մեծամասնութիւնը , սակայն , հանրութեան ճաշակին կը հետեւի , առանց զայն բարեփոխելու ճիգի , որուն համար մեղադրելի ալ չէ : Եւ այս միօրինակութեանը մէջտեղ , երբ օրաթերթ մը կը յայտարարէ թէ կրօնական գիրք մը ընտրած է իբրեւ թերթօն , նախաձեռնութեան ոգի մը ցոյց տուած կըլլայ որուն առջեւ , իմ մասիս , կանգ կ'առնեմ : Լրագիր կարգալու սկսելէս ի վեր , վարժուած էի — եւ ինծի պէս հազարաւորներ ալ նոյն վարժութիւնը ունին — սա ձեւով Ծանուցումներ կարգալու . «Յառաջիկայ թիւով պիտի սկսինք , իբրեւ թերթօն , Ֆրանսայի «ծանօթ հեղինակներէն . . . ի յոյժ հետաքրքրաշարժ մէկ վէպը , . . . , որուն մէջ «սիրային անցքեր ու շահեկան դէպքեր «իրարու կը յաջորդեն , ճարտար հիւսուածքով «մը , հեւ ի հեւ անձկութեան մը մէջ պահելով ընթերցողը» , եւ այլն : Ու ահա յանկարծ , առտու մը , կը կարգամ թերթօնի ծանուցում մը որուն մէջ ըսուած է . «Եթէ «Ջերմեանդ հաւատացեալները իբր հաւատքի «զօրաւոր կռուան մը կը փարին Նարեկին , «նորահաս երիտասարդութիւնն ալ ո՛չ նուազ «յարգանքով ու երկիւղածութեամբ կը վերաբերուի անոր , հայ գրականութեան ամէնէն ինքնատիպը , վսեմն ու հոգեցունցը «տեսնելով հայ վանականին այս սրտաբուխ «մաղթանքներուն մէջ» :

Առանց կրօնամոլ մը ըլլալու , ո՛չ ալ պարկեշտասուն ընթերցող մը — երեւակայեցէ՛ք որ Աւեսաքերին հետ . . . Ֆեհ քը Սիեֆ ալ կը կարգամ — համակրեցայ Մանգումեին այս նորութեանը : Եւ այնքան ջերմապէս , որ այս երկրորդ նամակս «կրօնական թերթօն»ին կը նուիրեմ , սպասելով փետրվար 25 ին ուր պիտի սկսիմ օրը օրին կարգալ «Սրբոյն Գրիգորի Նարեկայ վանից վանականի եւ հոգեկից հետաօրի» Աղօթաւանդոյցը , աշխարհաբարի վերածուած՝ Ժառանգորդի հեղինակին կողմէ :

Առանց ծանրանալու այն նիւթական զոհողութեան վրայ զոր ընել յանձն առած է Մանգումեի Տնօրէնութիւնը , այս յաւելուա-

ծական հրատարակութեամբ, — լրագրական prime մը, եւրոպական բառով, — պիտի չեղտեմ միայն սա պարագան, թէ Նարեկին աշխարհաբար թարգմանութիւնը գրական կարեւոր աշխատասիրութիւն մըն է, ժողովուրդին դիւրամատչելի ըլլալէ զատ, բանասէր-ներուն ալ ուսումնասիրութեան ու զննու-թեան նիւթ մատակարարող:

Նարեկը, ինչ աղուոր գիրք, ամբողջ բանաստեղծութիւն, ամբողջ իմաստասիրու-թիւն: Իր հոգեկան սփոփանքէն ու մտքի կազմութեամբէն զատ, մեզի պիտի ընծայէ նահապետական կեանքի վերջիւնում մը, վե-րագարձը բոլոր այն հին բարի սովորոյթնե-րուն որոնք կը տիրէին հօրենական յարկին տակ, եւ հիմայ խոյս տուած են տակաւ տակաւ մեր յարկերէն, — նոր ու օտարա-մուտ բարքերու հետեւանքով: Այս սողերը գրած վայրկեանիս, մատենագրանիս խոր-չէն հանած ու գրասեղանիս վրայ դրած եմ Նարեկին 1804ի մէկ տպագրութիւնը «Ի վէնէտիկ, Ի վանս սրբոյն Ղազա-րու» ի թուականութեանս ՌՄԾԳ. Պրզ-տիկ հատոր մը, մաշուած՝ սրտիս պէս՝ որ սակայն հարիւր տարիներէ ի վեր մնացեր է ընտանիքին մէջ «օրուոց օր-գի» — ինչպէս կըսեն — որ թերեւս դեռ հարիւր տարի մըն ալ դիմանայ, երբ այս սողերը գրողը ո՛չ եւս գոյութիւն ունե-նայ եւ նորեր յաջորդեն իրեն, ամէն բան փոխուած տեսնելով շուրջերնին, բարքեր, ճաշակ ու գրականութիւն: Այդ թուականին, Քասիմի Թերթօն-Նարեկն ալ անցած պիտի ըլլայ, ու նորէն այս հին գրաբար հատորն է որ, ամէն տուններու մէջ, պիտի գրաւէ զրադա-րաններու խորը, իր կողքին վրայ կրելով ձեռագիր արձանագրութիւնը հաւուն ու պա-պուն մահուան եւ զաւկին ու թոռնիկին ծննդեան:

ՄԵՆԱՍԷՐ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐ (Հետաքրքրաշարժ Վեպ երեք հատորով) Թարգմ. Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ: Վաճառման կեդրոնատեղին է Պաղատեան Գրատունը: Կը գտնուի նաեւ ամէն հայ գրավաճառներու քով:

Գին 15 դրուշ:

2—10

ՀԱՆՃԱՐԸ ԵՒ ՏԱՂԱՆԴԸ^(*)

Տարվին, իր Բնապատումի մը ճամ-բորդութիւնը աշխարհի շուրջը անուն գոր-ծին առաջին գլուխին մէջ, նորաստեղծ զարմանալի մէկ նկարագրութիւնը կ'ընէ Ատլանտեան Ովկիանոսին մէջ՝ Սէն-Բով բացարձակապէս մերկ ժայռերուն վրայ պար-զուող կեանքին: Երկու տեսակ թռչուն-ներ կը գտնուին հոն, ուրուրը եւ ծովու ծի-ծեռնակ մը, մեծ եփենէն: Այդ թռչուննե-րուն վրայ իրիւ մակարոյձ կ'ապրին ճանձ մը, տիզ (կեմե) մը եւ ուրիշ թեւաւոր մի-ջատ մը. իրենց կղկզանքներէն կը սնանին աղբաբզէզ մը եւ փայտօյլ մը. բազմաթիւ տեսակէ սարգեր իրենց թակարդ-ոտայնները կը լարեն ճանձերուն եւ ուտիճներուն, եւ կրնանք աւելցնել, ինչ որ չըսեր Տարվին, թէ այդ ստուար, կենդանիներուն շուրջը կը վժայ ապահովապէս ամբողջ աշխարհ մը մանրագիտական անասնիկներու, ջրաձի-ներու, մանրաբոժոժներու եւ բուսաձիճնե-րու: Կը բաւէ ուրեմն որ միակ թռչուն մը Սէն-Բով գայ՝ անմիջապէս երաշտ անբեր ժայռը անուցիչ վայրի մը փոխակերպելու հա-մար, պատշաճուած հետզհետէ արաբածներու բաւական ընդարձակ շարքի մը որ, առանց այդ թռչունին, չպիտի կրնար տեսել միակ օր մը այդ շրջավայրին մէջ:

Բացարձակապէս այս իրողութեան յար եւ նման է, օրինակի համար, գրականու-թեան մը ծագումին իրողութիւնը ժողո-վուրդի մը մէջ: Հանճար մը, մտաւորական այն մարտդական գործարաններուն միջոցաւ զորս ինքը միայն կը կրէ, զգայարանքնե-րուն ապաւորութիւնները կը փոխակերպէ արուեստի գործի մը՝ հասկնալի, մարտիկ բոլոր միւս մարդոց համար: Անմիջապէս ծնունդ կուտայ մակարութեան ճակնկալու ամբողջ խումբի մը: Նախ կուգան նմանող-ները, հետեւողները որոնք կը կրկնեն եւ աւելի կամ նուազ ճարտարօրէն կը փոփոխեն առաջին գործը: Ասոնք կերպով մը այն ճան-

(*) Շարունակութիւն նախորդ Թիւին:

ճերը եւ այն տիգերն են որոնք ծովու ծիծեռնակներուն հիւթովը կը սնանին : Յետոյ կը հիմնուին քննադատական եւ գեղազարդական դպրոցներ , որոնք բան մը չունին ընելիք մերկ բնութեան հետ եւ կը զբաղին միմիայն հանճարին եւ իր հետեւողներուն կողմէ կատարուած այդ բնութեան մարտադրութեան արդիւնքներովը : Ասոնք ալ կերպով մը այն սարգերն են որոնք կը պաշարեն ճանճերը , եւ այն աղբարդէզները որ ծիրտեւորով կը սնանին : Վերջապէս , կ'երեւան գրականութեան պատմագիրները , որոնք , մեծ ազմուկ հանելով , կը պատմեն թէ ինչպէ՛ս անցած դարձած է ամէն բան այդ գրականութեան սլորտին մէջ , Այս վերջիններուն համար չ'մ գտներ անմիջապէս Սէն-Բոլի ժայռին համապատասխանող գործարանաւորութիւնը , որովհետեւ չպիտի ուզէի զանոնք նմանցնել յիշուած օրինակին մանրէներուն :

Հանճարը կը կայանայ ուրեմն գործարանաւորական սկզբնապէս բարձր զարգացումի մը մէջ , տաղանդը՝ վարժութեան կիրարկումով ստացուած պարզումին մէջ այն բնական տրամադրութիւններուն զօրս , որ եւ է ցեղի մը մէջ , կը կրէ առողջ եւ բնօրինաւոր անհատներուն մեծամասնութիւնը : Հիմայ որ կը հաստատեմ թէ հանճարը բնականական , յօրինուածային խարխիւ մը ունի , պիտի յամառին ինձ հարցնել թէ ո՞րն է այն հիւստեանքը որուն ամէնէն ճոխ զարգացումը յառաջ կը բերէ հանճարը : Բաւական աչք վարկցնող՝ յանդուգն երեւոյթ մը կ'առնէ այդ հարցումը : Պատասխանը , սակայն , այնքան դժուար չպիտի ըլլար թերեւս , եթէ հանճարը կամ տաղանդը պարզ երեւոյթներ ըլլային : Պիտի կրնայինք այն ատեն խիստ պարզ մէթոտով մը հասնիլ այդ դժուարութեան լուծումին : Ահաւասիկ պարագայ մը , ուր աչքի կը զարնէ ապշահար ընող յիշողութիւն մը . ահաւասիկ ուրիշ պարագայ մըն ալ , արտակարգ կամքով մը յաւանդուած : Ստուգապէս , այս երկու պարագաներուն մէջ , ուղեղային այն կեդրոնները որոնք յիշողութեան կամ կամքին վարիչը կ'ըլլան , պէտք է որ մասնաւորապէս զարգացած ըլ-

լան : Որո՞նք են այդ կեդրոնները , ահա՛ ինչ որ չենք գիտեր դեռ ստուգապէս . բայց ժամանակին հետ պիտի գտնենք զանոնք , եւ անոնցմէ մէկ քանիներուն հետքը տեսնելու վրայ ենք արգէն :

Այն մարդը որուն համար մտաւորական գործունէութիւնները հոգիի մը , այսինքն մեր մարմնին անձանօթ հիւրի մը պաշտօններն են , հանճարի մը եւ նոյն իսկ տաղանդի մը երեւոյթին բացատրութիւնը կա՛մ ծաղրելիօրէն զիւրին կա՛մ բողբոջիւն անկարելի պիտի գտնէ : Չպիտի կրնար սակայն ազատիլ ըսելով թէ Պետրոսը աւելի հոգի ունի քան Պողոսը , որովհետեւ հոն ուր նիւթ չկայ , չկայ նաեւ տարածութիւն , այս վերջինը ըլլալով միակ նիւթին մէկ ստորոգելին , չկայ նաեւ ներգործութիւն , որ է միակ զօրեղութեան մէկ ստորոգելին , նիւթին պաշտօնը . հետեւապէս , չի կրնար հարցում մը ըլլալ ոչ մէկ «աւելի»ի , ոչ մէկ «պակասի» , այլ միայն միութեան : Չի կրնար նաեւ ըսել թէ իրարմէ տարբեր հոգիները տարբեր են իրենց իսկութեանը մէջ , եւ թէ ինչքիբը ուրեմն ոչ թէ «աւելի»ի մը կամ «պակաս»ի մը , այլ «այլապէս կազմուած»ի մը վրայ է . որովհետեւ աննիւթականին իսկութեան մէկ տարբերութիւնը այնքան աներեւակայելի է մարդկային իմացականութեան որքան նիւթին իսկութեան տարբերութիւնը . զոր աշխարհի մասին ունեցած մեր յղացումը կ'ենթադրէ իրբեւ մի անփոփոխ եւ միշտ նման իրեն : Կը մնայ ուրեմն միայն սա բացատրութիւնը որ միակը չէ , գիտնալ թէ Աստուծոյ շնորհքը աւելի ճոխ գործունէութիւն մը կը պարգեւէ այս ինչ հոգիի մը քան այն ինչ հոգիի մը : Ան որ ընդհակառակը կ'ընդունի , արդի գիտութեան հետ , թէ մտաւորական գործունէութիւնները որոշուած գործարաններու , այսինքն ուղեղային կեդրոններու պաշտօններ են , ան միայն կրնայ ըմբռնել առանց մէկ դժուարութեան թէ աւելի լաւ զարգացած գործարան մը նուազ լաւ զարգացած գործարանէ մը աւելի աղէկ պիտի աշխատի : Թէ ի՞նչու այս կամ այն կեդրոնը աւելի լաւ զարգացած է այս ինչ անհատի մը քան այն ինչի մը քով , այդ հարցը անտարակոյս չէ

բացատրուած այս վարկածով , Բայց այս ձանձրացուցիչ «ինչու»ն որ կը հտառգօտէ երեւոյթներուն վերջին պատճառը , ամենուրեք եւ միշտ ի բաց վանուած է ստոյգ գիտութենէն :

Եթէ բան մը չեմ ըսեր այն պատճառներուն մասին որոնք յառաջ կը բերեն հանճարը , որովհետեւ այդ պատճառները անձանոթ են դեռ , մէկ քանի խօսք կը պարտիմ մէջ բերել հոս՝ այն առնջութիւններուն վրայ որոնք գոյութիւն ունին հանճարին եւ Ղախտին վրայ : Ուզեցին այս երկու եզրերը իրարու նմանցնել , եւ շատ մը գիտնականներ յայտարարեցին թէ «հանճարը Ղախտ մըն է» : Ես կը կարծեմ որ ասիկայ սխալ մըն է , ծագում առած ըլլալով մանաւանդ «հանճար» բառին աւանդական , այսինքն անստոյգ մէկ գործածութենէն :

Հանճարը բնաշրջական է : Անհատի մը մէջ , առաջին երեւումն է ան ուղեղին նոր պաշտօններուն եւ անտարակոյս նաեւ նոր կամ բարեփոխուած հիւստեածքներուն , թերեւս յետոյ ամբողջ սերունդին համար արպարական ըլլալու ճակատագրուած : Արդ , ո՞ւր կը տեսնենք միթէ անանկ օրինակ մը ուր անտարաձանկան նորահիւսք մը բնաշրջական ըլլայ :

Կ'ընդունիմ թէ վաւերացուած՝ ստոյգ հանճարն ալ բաւական յաճախ կերպով ենթարկուած ըլլայ ուղեղային զբոսումներու : Բայց ասիկա չապացուցաներ երբեք թէ հանճարը ի յառաջագունէ հոգեախտ մըն է : ասիկա միայն կը յայտնէ թէ բնաշրջական նորակազմոյք մը , վերջին զանազանաւորում մը , առաջին անգամ ներկայանալով իբրեւ անհատական ստացում , աւելի փափուկ եւ նուազ ընդդիմահար է քան սօստ կերպով եւ հաստատունօրէն կազմուած գործարան մը , ժառանգականութեամբ եւ երկար ընտրութեամբ մը ամրապնդուած : Գիտենք թէ շատ մը ըմբիշներ կը տառապին եւ կը մեռնին անդազանցութեամբ եւ սրտին ճարպային այլասերմամբ . ասիկա արուեստավարժ հիւանդութիւնն է ձիարշաւի օխոյեաններուն եւ մարզագետներուն : Բայց , միթէ՞ չպիտի խնդային քթիս , եթէ ըսէի . «ըմբշարուեստը սըր-

տի հիւանդութիւն մըն է» : Իրդ այս խօսքը ճիշտ այն արժէքը ունի ինչ արժէք որ ունի սա նշանաւոր առածը . «Հանճարը Ղախտ մըն է» :

Թարգմ. Ե. Գ.

ՄԱՔՍ ՆՕՐՏԱՌԻ

(Շարունակելի)

ՀԱՐՍՍԱՆԵԿԱՆ ՀԱՆԳԷՍ

Յառաջիկայ երկուշաբթի , ցերեկուան ժամ 7-ին , Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցին մէջ տեղի պիտի ունենայ պատկազրութիւնը Սիմօն էֆ. Քայսէրլեանի՝ Օր. Երանուհի Մ. Յակոբեանի հետ , հանդիսադրութեամբ Ս. Պատրիարք Հօր : Յաջորդ օրը , երեքշաբթի , նորապատկ ամուլը Եւրոպա պիտի մեկնի , զրօսական ուղեւորութիւն մը կատարելու : Քայսէրլեան էֆ. , իւնիօն ապահովագրական ընկերութեան Արեւելքի ճիւղին Ընդհ. Տնօրէնը , ոչ միայն իր վարած ընդարձակ գործառնութիւններովը կանուխէն պատուաւոր զիրք մը գրաւած է հրապարակի վրայ , այլեւ իր անձնական ձիրքերովը ու յարաբերութիւններովը՝ մեր բարձր գասու երիտասարդութեան ամէնէն համակրելի դէմքերէն մէկը կը ներկայացնէ , հաւասարապէս համակրելի ըլլալով նաեւ ժողովրդական դասին : Օր. Երանուհի Յակոբեան , գուստր Միքայէլ էֆ. Յակոբեանի , նոյն զիրքը կը գրաւէ հայ գեղեցիկ սեռին մէջ , իր բնածին յատկութիւններովը ու ստացած գաստիարակութեամբը :

Կը կանխենք մեր ջերմագին խնդակցութիւնները այս բարեգէպ ամուսնութեան առթիւ , երկու կողմին , ինչպէս նաեւ Միքայէլ էֆ. Յակոբեանի որ մեր ծանօթ անձնաւորութեանց շարքին մէջ պատկառելի զիրք մը կը գրաւէ , եւ մասնաւորապէս սիրելի ու յարգելի է ամէնուս՝ իր հանրային ու անհատական բարեգործութիւններովը որոնց հաճութեամբ արձագանդ եղած է հայ մամուլը ամէն ժամանակ :

Արսօնասէր Կ. Ս. Իիթիլիճեմն

Տպագրութիւն Ե. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Կ. Պոլիս , Ֆինանսըլար եօղուշու , Թիւ 27




ՌՕՍԻԱ — ROSSIA



ԱՊՍԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՄՔ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիւններ	34,775,642 Փրանք
Երաշխաւորութեան գումար	121,765,333 »
1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած	164,172,000 »
Կեդրոնացեալի, Ղալաթիոյ քաղաքին վրայ, Մաքսաւան հին տեղը	
Ընդհ. Բնակիչ	Ընդհ. Գործակալ
Ա. ՀԻՒՐՈՒԻՉ	ԹԷՈՏՈՐ ՌԷԲԲԷՆ



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղաւակի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐԻ

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատուող եւ գիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկէրի մեքենաները կը գնէ:

Ձեռքի, ոտքի, ձեռքի ու ոտքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ԲԵՐԱ, ՄԵԾ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դիմաց.

ԿԱԼԱԹԱ $\left\{ \begin{array}{l} 1. \text{ Սինկէր խան, Թիւնէլին ետեւը.} \\ 2. \text{ Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին Դիմաց.} \end{array} \right.$

ՊՈԼԻՍ $\left\{ \begin{array}{l} 1. \text{ Սուլթան Համամ.} \\ 2. \text{ Սուլթան Պէյազիտ.} \end{array} \right.$

Դասեր եւ նորոգութիւնք ձրի.

Կասաբեալ Երաւխաւորութիւն

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ

ՄԱՍՆԱՎԱՐԻՆԻ
ՇԱՐՔԱՎԱՐՈՒՄ

ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ ԵՒ ԱՐԾԱԹԵՂԻՆԱՅ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ.— Ալիսան Մ. Պարսիզպան-եան Ոսկերչական Վաճառատունը (Պոլիս, Ոսկերչաց Շուկայ, Թիւ 13) որ երկար տարիներէ ի վեր կը գործէ ճշգրտեամբ եւ յաջողութեամբ, եւ որուն գործածած ոսկին ու ապամանդները առաջին տեսակէ ըլլալէ զատ, արհեստագիտական պատրաստութիւնն ալ խիստ ճաշակաւոր է, եւ այս տեսակէ տներով միշտ գոհ թողուցած է իր բազմաթիւ յաճախորդները, այս անգամ բաւորովին նոր դրութիւն մը հնարած է, — յոյժ զիւրամատչելի գիներով իր ծախած ապրանքները, ի հարկին, 100ին 10 զեղչով ետ առնել յաճախորդէն եւ գրամը վճարել, Կ'արժէ այցելել յիշեալ Վաճառատունը, եւ աչքէ անցընել անոր ոսկերչական ցուցադրութիւնները, այս կարգի որ եւ է գնում ընելէ առաջ:

Ղալաթիա—Վոյվոտա փողոց Թիւ 85, Մ. Տէր Դաւթեան չապիկի վաճառատունը նոր եղանակի առթիւ կարեւոր ապագրանքներ տուած ըլլալով որոշած է այժմու մթերքը 100ին 25 իրական զեղչով ծախել: Ուստի կը հրաւիրուի յարգոյ հասարակութիւնը որ օգտուի այս էապէս ճշգրիտ յիշատակոնէն, որ մէկ ամիս պիտի տևէ: Լիքիտաթիոնի ապրանքներն են չապիկ, օձիք, թեւնոց, փողկապ, գուլպայ, թաշխինակ, կոճակ, եւն, Տէր Դաւիթեան վաճառատունը իր ծախած ապրանքներուն ասկունութեամբ ու ճաշակովը արդէն հանրածանոթ ըլլալով, կը յանձնարարենք որ մեր ընթերցողները օգտուին այս իրական առիթէն:

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ՃԻԻՎ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ վնասք	240.000.000 ֆր.
1899ին գանձուած ապահովագին	19.500.000 »
Դրամագլուխ եւ պահեստ	105.000.000 »
Ապահովագրեալ դրամագլուխ	18.000.000.000 »

ԿԵՆԱՅ ՃԻԻՎ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ վնասք	99 000.000 ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253.000.000 »
Դրամագլուխ եւ պահեստք	150.000.000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60 0/0 — ինչ որ «Իւնիօն» ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵԻՆԵԼՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲՈՎ

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց զեղչեալ գիներով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ որ եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիօնի ապահովագրուողք ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բաւոյման (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԳԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս, Կալարա, Բահսապուրուն խան, Օսմ. Պանֆային դիմացը
Գործակալութիւնք Թուրքիո գլխաւոր քաղաքաց մէջ